ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<16>> հոկտեմբեր 2013թ. N 308

Ք.Արմավիր

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով, 1.12-րդ կետի <<բ>> ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեշատ /Արմ./ համայնքի բնակիչ Սուսաննա Միրզոյանի դիմումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի Արմավիրի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության պետի 2013 թվականի հուլիսի 12-ի եզրակացությունը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով Սուսաննա Միրզոյանին հատկացնել 20000 /քսան հազար/ դրամ միանվագ օգնություն:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին /Փ. Կարապետյան/՝ սահմանված կարգով իրականացնել գումարի վճարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

20.0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի ՍԾՏԳ-ի կողմից Արմավիրի մարզի Այգեշատ գյուղի բնակիչ Սուսաննա Միրզոյանի ընտանիքի սոցիալական վիճակի ուսումնասիրությունից պարզվեց հետևյալը: Սուսաննա Միրզոյանը՝ միայնակ, անժառանգ և որպես երրորդ խմբի հաշմանդամ ապրում է իր տանը: Սուսաննա Միրզոյանը չի աշխատում և երրորդ խմբի հաշմանդամության համար ստանում է 13000դրամ թոշակ:

Ընտանիքը հաշվառված է Արմավիրի ընտանիքների անապահովության գնահատման համակարգում և ստանում է 16000դրամ նպաստ:

ԱՐՄԱՎԻՐԻ ՍԾՏԳ-Ի ՊԵՏ՝ Ռ. ԱՐՏԵՆՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ Ա. Մկրտչյան

12.07.2013թ.